

IMS



ՎԻՐԱԿՈՐԱՆՔ, ԶՐՊԱՐՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔ

Դասընթաց լրագրողների համար

ԴԱՍԸՆԹԱՅԻ ՄՈԴՈՒԼ
2021

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	2
Մեթոդաբանությունը.....	5
Դասընթացի նպատակները եւ խնդիրները	6
Դասընթացի քայլերը.....	8
ԴԱՍ 1.....	8
ԴԱՍ 2.....	9
Գնահատում	9
«Ինֆորմացիայի ազատության կենտրոնի» մասին.....	11

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ջրպարտությունը շատ երկրներում օգտագործվում է կարծիքի արտահայտման ազատությունը եւ այլախոհությունը (մասնավորապես լրագրողների) ճնշելու համար: Չնայած զրպարտության մասին օրենքների նպատակն է իրավական պաշտպանության միջոց տրամադրել այն անձանց, ում պատիվն ու բարի համաբավն արատավորվել է զրպարտող բնույթի հրապարակային հայտարարություններով, սակայն որոշ դեպքերում այդ օրենքները կարող են հանգեցնել կարծիքի արտահայտման ազատության իրավունքի սահմանափակման:

Համացանցի եւ մասնավորապես սոցիալական մեդիայի ազդեցության աճի պատճառով այսօր, առավել քան երբեւէ հեշտացել է լայն լսարանի համար բովանդակություն հրապարակելը: Արդյունքում՝ զրպարտությունը դարձել է առցանց հրապարակված հայտարարությունների դեմ հաճախ կիրառվող պաշտպանության միջոց՝ անկախ նրանից՝ այդ հայտարարություններն արդարացի են, թե ոչ:

Ավանդական մեդիայում կարծիքի եւ խմբագրման ազատության մակարդակը մեծապես տարբերվում է սոցիալական մեդիայում եւ համացանցում տեղեկատվության հրապարակման ազատության մակարդակից: Վերոնշյալը, ինչպես նաեւ զրպարտության մասին օրենքների վերաբերյալ իրազեկության պակասը եւ այն փաստը, որ շատ երկրներ չունեն զրպարտության վերաբերյալ օրենսդրական հստակ շրջանակներ առցանց հարթակների համար, հանգեցրել են առցանց զրպարտության դեպքերի աճի եւ որոշակի անորոշության, որը վերաբերում է առցանց ոլորտում զրպարտության կիրառությանը:¹

Առցանց զրպարտությունը խնդրահարույց է բազում պատճառներով:² «Համացանցը հեշտ ճանաչելի մարմին չէ, որը կառավարվում կամ կարգավորվում է միջազգայնորեն ճանաչված խիստ բնութագրերի կամ սահմանների շրջանակներում»:³ Առցանց միջավայրը կարող է դժվարացնել օրինազանցներին հայտնաբերելը կամ հետապնդելը, իսկ տուժողները կարող են մտածել օրինազանցին կամ համակարգի օպերատորին հետապնդելու մասին, քանի որ որոշ իրավական համակարգեր հավասարապես պատասխանատու են համարում յուրաքանչյուրին, ով մասնակցում է

¹ Դեսան Այեր, «Հարավաֆրիկյան Հանրապետությունում առցանց զրպարտության վերաբերյալ վերլուծություն», 2018, «Սպեկյուլում Ջյուրիս» ամսագիր (հասանելի է՝ <http://www.saflii.org/za/journals/SPECIU/2018/10.pdf>):

² Նույն տեղում՝ Բաժին 3:

³ Նույն տեղում՝ էջ 127:

գրպարտող բնույթի նյութերի տարածմանը:⁴ Բացի այդ՝ խնդիրը քննելիս դատարանի իրավասությունը որոշելը կարող է խրթին լինել, քանի որ գրպարտող բովանդակությունը կարող է հրապարակվել ամբողջ աշխարհից, եւ վեճի կողմերը կարող են ունենալ տարբեր իրավասություններ, կամ էլ նյութը կարող է հրապարակվել բոլորովին այլ վայրում:

Վիրավորանքի, գրպարտության եւ ատելության խոսքի վերաբերյալ իրավական նորմերը եւ դրանց կիրառությունը սերտորեն կապված են նաեւ տեղեկություններ ու գաղափարներ տարածելու լրագրողական իրավունքների եւ ազատությունների հետ: 2010 թվականից ի վեր, ինչ ՀՀ-ում ապաքրեականացվեցին վիրավորանքի եւ գրպարտության նորմերը, մեզանում ձեւավորվել է կայուն նախադեպային իրավունք եւ դատական պրակտիկա վիրավորանքի եւ գրպարտության փաստական հիմքերով: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածը բազմիցս մեկնաբանվել է դատարանների կողմից եւ այդ առումով հոդվածի դրույթների կիրառությունը կանխատեսելի է եւ որոշակի: Սակայն հասարակական հարաբերությունները, տեղեկատվական տեխնոլոգիաները շարունակաբար զարգանում են, որի պատճառով պարբերաբար կարիք է առաջանում վերանայել արդեն հաստատված մոտեցումները եւ որոնել նոր լուծումներ, որոնք կհամապատասխանեն նոր ստեղծված հասարակական եւ մասնավոր հարաբերություններին: Հատկապես արագ են զարգանում թվային տեղեկատվական տեխնոլոգիաները ու այս առումով կարելու է, որ լրագրողները մշտապես իրազեկված լինեն, թե նոր տեխնոլոգիաները իրավունքների ու պարտականությունների ինչ նոր շրջանակներ են սահմանում: Օրինակ, այնպիսի նոր տեղեկատվական տեխնոլոգիաները, ինչպիսին են լրատվական ազդեցատրները, բջջային հավելվածները, սոփիստիկ են վերանայել իրավական պատասխանատվության ավանդական շրջանակները եւ հիմքերը: Այս առումով կարելու է նաեւ նոր իրավական կարգավորումների մասին շարունակ տեղեկացված լինելը: Ընդ որում, խոսքը վերաբերում է ոչ միայն օրենսդրական փոփոխություններին, այլ նաեւ ինքնակարգավորման նախաձեռնություններին ու նորմերին, որոնք հաճախ կարող են առավել արդյունավետ իրավական պաշտպանության միջոց հանդիսանալ, քան ավանդական դատական պաշտպանության միջոցները: Սա հատկապես վերաբերում է լրագրողներին եւ լրատվական կազմակերպություններին:

Հնարավորության դեպքում գրպարտության գործերով փոխհատուցումը պետք է լինի ոչ նյութական (ոչ ֆինանսական) եւ պետք է միտված լինի գրպարտող բնույթի

⁴ Օրինակ՝ Հարավաֆրիկյան Հանրապետության օրենսդրությունը ««Ազգային Մեդիա» ՍՊԸ-ն եւ մյուսներն ընդդեմ Բոգոշիի» գործում:

հայտարարության պատճառած սխալը վերացնելուն, օրինակ՝ ներողություն խնդրելու կամ ճշտված հայտարարությունը հրապարակելու միջոցով:

Դրամական փոխհատուցումը (վնասի փոխհատուցում) պետք է կիրառվի միայն այն դեպքում, երբ մյուս՝ նվազ խիստ միջոցներն անբավարար են հասցված վնասը հատուցելու համար: Պատճառված վնասի (նյութական վնաս) փոխհատուցումը պետք է հիմնված լինի վնասի չափը որոշող եւ զրպարտող բնույթի ենթադրյալ հայտարարության հետ պատճառահետեւանքային կապը ներկայացնող ապացույցների վրա:

Դասընթացի ընթացքում հատուկ անդրադարձ կարվի զրպարտությանը եւ վիրավորանքի կարգավորմանը նոր մեդիա հարթակներում: Ինչպե՞ս է կիրառվում «կրկնության կանոնը» (երբ մարդիկ վերահրապարակում են վիճարկվող արտահայտությունը՝ այսպիսով դառնալով զրպարտող գրառման տարածողներ) կամ «բարեխիղճ հրապարակման սկզբունքը» սոցիալական հարթակներում: Ողջամիտ հրապարակման պաշտպանությունը կիրառելի է մեդիայից դուրս հասարակության մյուս անդամների համար նույնպես՝ պայմանով, որ նրանք պետք է ձեռնարկեն բոլոր ողջամիտ քայլերը տեղեկատվությունը ճշտելու համար, ինչպես սովորաբար պահանջվում է այդ պաշտպանությունից: Թեև սովորաբար դատարանները պահանջում են սեղմ ժամկետում ջնջել վիճարկվող արտահայտությունները սոցիալական հարթակներից, սակայն օրինակ, Թվիթերում գրառում ջնջելը այն չի հեռացնում բոլոր հարթակներից, քանի որ կան բովանդակության տարածման այլ եղանակներ, որոնք ենթակա չեն ջնջման (օրինակ՝ «ռեթվիթ»-ը, որում անձինք ավելացրել են իրենց մեկնաբանությունը): Մա առանձնահատուկ մարտահրավեր է, որին բախվում է սոցիալական մեդիան զրպարտության հայցի դեմ արդյունավետ միջոց գտնելիս:

Մեկ այլ կարեւոր հարց է այն, թե որքանով են լրագրողները պատասխանատու այլ անձանց կողմից արված զրպարտող բնույթի հայտարարությունների համար, քանի որ նրանց աշխատանքի հիմնական մասը ներկայացնում է այլ անձանց խոսքերը: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը ([ՄԻԵԴ](#)) գտել է, որ լրագրողը պատասխանատվություն չի կրում այլ անձանց կողմից արտահայտված կարծիքների համար, եւ նրանից չի պահանջվում «համակարգված եւ պաշտոնական կերպով» հեռու մնալ «այնպիսի հայտարարությունից, որը կարող է վարկաբեկել կամ վնաս հասցնել երրորդ կողմին»⁵՝ պայմանով, որ նա չի կրկնել զրպարտող բնույթի

⁵ Մարդու իրավունքների եվրոպական դատարան, Դիմում No 1131/05 (2007):


հայտարարությունները՝ ներկայացնելով դրանք որպես իր սեփականը, հաստատելով կամ հստակ համաձայնելով այդ հայտարարությունների հետ:

Վերը նշվածը վերաբերում է նաև ատելության խոսքի իրավակարգավորումներին եւ պրակտիկային: Միջազգային իրավունքում ատելության խոսքը բացարձակապես մերժված կատեգորիա է: ՀՀ-ում ատելության խոսքի կարգավորումները բավականին թերի են, ընդհանրապես բացակայում է դատական պրակտիկա կամ նախադեպային իրավունք՝ ի տարբերություն վիրավորանքի ու զրպարտության: Բացակայում է նաև ատելության խոսքի իրավական սահմանում: Մինչդեռ, ատելության խոսքը լայնորեն օգտագործվում է քաղաքական եւ հասարակական հանրային քննարկումներում, որի վերաբերյալ առկա է զգալի հանրային մտահոգություն: Քաղակական եւ հասարակական դիսկուրսում զգալի դերակատարում ունեն առցանց լրատվամիջոցները ու այս առումով անհրաժեշտ է, որ լրագրողները ունենան կայուն գիտելիքներ ու փորձառություն ատելության խոսքի իրավական չափանիշների եւ հիմքերի մասին:

Սույն դասընթացը կազմվել է հաշվի առնելով վերը նշված խնդիրները եւ ստեղծված իրավիճակը: Անհրաժեշտ է, որ լրագրողները, որոնք ունեն առանցքային դերակատարում հանրային եւ քաղաքական ցանկացած դիսկուրսում, ունենան կայուն գիտելիքներ եւ հմտություններ վիրավորանքի, զրպարտության եւ ատելության խոսքի միջազգային եւ ներպետական իրավական հիմքերի մասին, ինչպես նաև տեղեկացված լինեն պրակտիկայում դրանց կիրառության մասին: Անհրաժեշտ է նաև, որ նրանք տեղեկացված լինեն նաև ինքնակարգավորման մեխանիզմների եւ դրանց իրավական հիմքերի մասին: Սույն դասընթացը կազմվել է վերը նշված նկատառումները հաշվի առնելով:

Մեթոդաբանությունը

Դասընթացը կազմվել է Google Classroom համացանցային հարթակում: Հարթակ կարելի է մուտք գործել հետևյալ [հղումով](#): Էլեկտրոնային հարթակի օգտագործումը հնարավորություն կտա, որ դասընթացի նյութերը մշտապես հասանելի լինեն մասնակիցների համար՝ այդ թվում նաև դասընթացի ավարտից հետո: Ավելին, այս էլեկտրոնային հարթակը հնարավորություն կտա մասնակիցների հետ փոխակտիվ



կապի մեջ մտել ինչպես դասընթացի ժամանակ, այնպես էլ դասընթացի ավարտից հետո: Երոբրդ, էլեկտրոնային հարթակը հնարավորություն կտա հանձնարարել տնային աշխատանքներ, կազմակերպել ֆորում-քննարկումներ

դասվար-մասնակից եւ մասնակից-մասնակից ձեւաչափերով, լուծել վարժություններ, օրինակ՝ թեստային առաջադրանքներ, եւ այլն: Կարելու է նաեւ հաշվի առնել, որ ցանկության դեպքում կարելի է կազմակերպել այնպես, որ վարժությունների եւ տնային հանձնարարությունները գնահատումը կատարվի համակարգչի միջոցով, որն ապահովում է գնահատման ճշգրտություն եւ օբյեկտիվություն: Հաշվի առնելով COVID-19 համավարակով ստեղծված իրավիճակը, Google Classroom-ը հնարավորություն է տալիս նաեւ դասընթացները կազմակերպել եւ՝ առցանց, եւ՝ անցանց եղանակով՝ երկու դեպքում ունենալով տեղադրված նյութերը հավասարապես օգտագործելու հնարավորություն:

Դասընթացը նախատեսվում է անցկացնել փոխակտիվ մեթոդով՝ դասախոսության, պրեզենտացիաների, խմբային քննարկումների, դատական գործերի վերլուծությունների, թեստային առաջադրանքների, ազդարարների, առցանց վարժանքների համադրումների միջոցով: Այս բոլոր նյութերը կտեղադրվեն առցանց հարթակում: Առցանց հարթակում կտեղադրվեն նաեւ լրացուցիչ ընթերցանության համար նյութեր օրինակ, իրավական հետազոտություններ: Դասավանդման այս մեթոդը արդյունավետ է արդեն կայացած մասնագետների շարունակական իրավաբանական կրթության համար, որի շրջանակներում բացառվում է լեկցիայի մեթոդը, պասիվ դիտորդի կարգավիճակը եւ սուբորդինացիայի առկայությունը դասվարի եւ ունկնիրների միջեւ: Դասավանդման նյութերի մեծ մասը նախատեսված են վարժանքների համար, իսկ դրանց որոշ մասը նախատեսված է նաեւ տեսական գիտելիքների ստացման համար:

Դասընթացից առաջ բոլոր մասնակիցները կգրանցվեց էլեկտրոնային հարթակում, իսկ այնուհետեւ պարբերաբար հարթակի միջոցով կծանուցվեն դասընթացի կարելու իրադարձությունների մասին:

Դասընթացի նպատակները եւ խնդիրները

Դասընթացի վերջնական նպատակն է լրագրողների կարողությունների զարգացումը, ազատ խոսքի իրավական պաշտպանության միջոցների մասին

տեսական գիտելիքների եւ գործնական հմտությունների հաղորդումը, որոնք կմեծացնեն լրագրողների իրավական պաշտպանության պոտենցիալը:

Դասընթացի ավարտին մասնակիցները կտիրապետեն վիրավորանքի եւ զրպարտության հիմքերով դատական հայցերից պաշպանվելու իրավական պաշտպանության կարելուր համակարգերին, օրինակ՝ Բարեխիղճ հրապարակում սկզբունքը (fair comment), ծանուցել ու հանել ընթացակարգը (Notice and Take Down), փաստացի հայտարարություն եւ գնահատական-դատողություն հիմքերը, լրատվական նյութի իրավաչափության գնահատման 5 չափանիշները, որոնք կիրառում է Մարդու իրավունքների եվրոպական դատարանը հանրային ու մասնավոր շահերը փոխհավասարակշռելիս (դրանք են՝ հանրային դիսկուրսի լրացում, սուբյեկտի ճանաչված լինելը, թիրախի նախկին վարքագիծը, հրապարակման բովանդակությունը, ձեւը եւ հետեւանքը եւ լրատվական նյութը ձեռք բերելու եղանակը): Ամենակարելուր նպատակը հանրային ու մասնավոր շահերի փոխհավասարակշռման վերաբերյալ գործնական գիտելիքների ու հմտությունների հաղորդումն է, որը կատարվում է վերը նշված հինգ չափորոշիչներով:

Հաշվի առնելով, որ դասընթացի երկրորդ մասը նվիրված է ատելության խոսքին, դասընթացի ավարտին նախատեսվում է, որ մասնակիցները կտիրապետեն ատելության խոսքի միջազգային իրավական սահմանումներին, կսովորեն տարբերակել ատելության խոսքը վիրավորանքից ու զրպարտությունից, կտիրապետեն ատելության խոսքի վերաբերյալ ՄԻԵԴ կարելուր նախադեպային իրավունքին, կսովորեն Ռաբաթի գործողությունների ծրագիրը եւ կյուրացնեն գործնական հմտություններ, թե ինչպես կիրառել ծրագրով ընդունված վեց չափանիշները ատելության խոսքի գործերով: Հատկապես մեծ ուշադրություն կդարձվի ատելության խոսքի տարածմանը համացանցի տիրույթում եւ այդ իմաստով ունկնդիրները կսովորեն մի շարք չափանիշներ, որոնք կիրառվում են համացանցում, մասնավորապես՝ սոցիալական ցանցերում ատելության խոսքից պաշպանվելու եւ ատելության խոսքը այլ անօրինական կոնտենտից տարբերակելու նպատակով:

Ինչպես նշվեց, դասընթացի վերջնական նպատակը լրագրողների կարողությունների զարգացումն է: Այս իմաստով, դասընթացի առցանց հարթակը կհամալրվի նոր նյութերով, որոնք որպես գրադարան կօգտագործվեն ունկնդիրների կողմից՝ հետագա իրավական գործընթացներում: Նման մոտեցումը հնարավորություն կտա ապահովել ծրագրի նպատակների կայունություն:

Դասընթացի քայլերը

ԴԱՍ 1

Առաջին դասը վերաբերում է վիրավորանքին եւ գրպարտությանը: Ցանցում այս դասընթացի համար տեղադրվել են մի շարք տեսական եւ գործնական նշանակության նյութեր: Առաջարկվում է որպես բազային փաստաթուղթ ընտրել վիրավորանքի եւ գրպարտության վերաբերյալ առցանց ձեռնարկը, որի առցանց ակտիվ հղումը տրված է մոդուլում: Այս ձեռնարկը պարունակում է ներպետական պրակտիկայում եւ օրենսդրության մեջ ընդունված բոլոր նյութաիրավական եւ ընթացակարգային հիմքերը: Այսպիսով, ձեռնարը կարող է տրամադրել համալիր գիտելիքներ եւ պրակտիկ հմտություններ: Այդուհանդերձ, դասի հիմնական նպատակն է 5-մասից բաղկացած չափորոշիչների ուսուցանումը: Դրանք ՄԻԵԴ-ի կողմից սահմանված սկզբունքներ են, որոնց միջոցով փոխհավասարակշռվում են հանրային ու մասնավոր շահերը վիրավորանքի ու գրպարտության գործերով: Ըստ այդմ, դասվարը պետք է դասի սկզբում ներկայացնի այդ չափորոշիչները որպես տեսական գիտելիքի հաղորդում: Այնուհետեւ դասվարը կարող է անցում կատարել թեստային առաջադրանքին, որը հնարավորություն կտա ստուգել մասնակիցների գիտելիքները հենց դասի սկզբում: Եթե մասնակիցներն ունեն նկատելի գիտելիքներ եւ փորձ վիրավորանքի եւ գրպարտության իրավական նորմերի վերաբերյալ, դասընթացը կարելի է սկսել նաեւ ներկայացված իրավիճակային խնդիրներով. նախ այդ խնդիրները անհրաժեշտ է հանձնարարել խմբային աշխատանքային ֆորմատով, այնուհետեւ կազմակերպել խմբային քննարկում: Որպես այլընտրանք, կարելի է այդ վարժությունները հանձնարարել մեկական մասնակիցների, որպեսզի նրանք պատրաստեն դրանց վերլուծությունը եւ ներկայացնեն պլենար քննարկման ժամանակ: Իրավիճակային խնդրի հանձնարարելուց առաջ անհրաժեշտ է հայտարարել, որ իրավիճակային խնդիրը պետք է լուծել 5 չափորոշիչների կիրառումով:

Որպես լրացուցիչ գրականություն, դասվարը կարող է հանձնարարել մասնակիցներին ուսումնասիրել ՏՎԽ-ի թիվ 50 որոշումը եւ այնուհետեւ առաջարկել մասնակիցներին այդ որոշումը գնահատել 5 չափորոշիչների կիրառմամբ: Այս վարժությունով կամ նախկին վարժությունով դասը կարելի է համարել փակված:

Կրկին նշենք, որ դասի հիմնական նպատակն է ՄԻԵԴ-ի 5 չափորոշիչների գործնական կիրառության վերաբերյալ գիտելիքներ ու հմտություններ հաղորդելը: Եթե մասնակիցները տիրապետեն այդ չափորոշիչներին, ցանկացած իրավիճակում

կկարողանան դրանք ճիշտ կիրառել եւ հանգել վեճի ճիշտ հանգուցալուծմանը վիրավորանքի եւ զրպարտության փաստական հանգամանքներով գործերով:

ԴԱՍ 2

Երկրորդ դասը վերաբերում է ատելության խոսքին, որի վերաբերյալ ՀՀ-ում բացակայում է համապարփակ իրավական կարգավորում եւ դատական պրակտիկա: Հետեւաբար, սույն դասընթացն առավել շատ տեսական գիտելիքների բաժին ունի, քանի նախկին դասընթացը: Դասընթացի հիմնական նպատակն է մասնակիցներին Ռաբաթի գործողությունների ծրագրի չափանիշները սովորեցնելը եւ դրանք կոնկրետ իրավիճակներում կիրառելը, որպեսզի մասնակիցները նախ սովորեն, թե ինչ է ատելության խոսքը, իսկ հետո կարողանան տարբերակել, զանազանել ատելության խոսքը վիրավորանքից ու զրպարտությունից կամ անօրինական խոսքի այլ տեսակից: Հաշվի առնելով այս նպատակը, դասընթացը առաջարկվում է սկսել սահիկից, այնուհետեւ ներկայացնել ատելության բուրգը, իսկ հետո՝ Ռաբաթի գործողությունների ծրագիրը: Մինչեւ վարժությանը անցնելը դասվարը կարող է ներկայացնել նաեւ ծաղրանկարների սահիկը՝ մի քանի օրինակներով, եւ առաջարկել մասնակիցներին որոշել, թե արդյոք տվյալ ծաղրանկարը ատելության խոսք է՝ ըստ Ռաբաթի գործողությունների ծրագրի վեց կետերի: Այս նախապատրաստական վարժությունը սպառելուց հետո առաջարկվում է անցնել հիմնական վարժությանը՝ համացանցում մոդերատորների համար նախատեսված խաղարկային վարժությանը: Անհրաժեշտ է վարժությունն ամբողջությամբ լուծել Ռաբաթի վեց չափորոշիչների կիրառումով, որպեսզի մասնակիցները յուրացնեն ատելության խոսքի բոլոր հատկանիշները: Որպես այլընտրանք, դասվարը կարող է ֆեյսբուքյան խաղի փոխարեն մասնակիցներին առաջարկել քննարկելու ՄԻԵԴ որոշման հիման վրա կազմված իրավիճակային խնդիրը (Սուրեկն ընդդեմ Թուրքիայի գործով) կամ քննարկելու Դիտորդ մամնի որոշումը Բաց հասարականության հիմնադրամներ – Հայաստան կազմակերպությունն ընդդեմ www.media.am գործով, որոնք տեղադրված են առցանց հարթակում:

Գնահատում

Դասընթացի կազմակերպիչները կարող են ընտրել մասնակիների գնահատման տարբեր չափանիշներ եւ չափորոշիչներ ու կշիռներ: Որպես կանոն, գնահատվում են հետևյալ հատկանիշները.

- ակտիվ մասնակցությունը դասին եւ անհատական եւ խմբային հանձնարարությունների, օրինակ՝ գործնական վարժությունների եւ դերախաղի վարժությունների կատարումը (40%),
- պատասխանի տարբերակների ընտրությամբ թեստի արդյունքները (20%):
- թեստային գործնական վարժության արդյունքները (40%):

Նախեւառաջ, մասնակիցները պետք է ակտիվորեն ներգրավված լինեն դասընթացին եւ քննարկեն, հարցեր տան, ներկայացնեն սեփական փորձը եւ ներգրավվեն խմբային եւ անհատական առաջադրանքների կատարմանը: Որոշ վարժությունների գնահատումը կարելի է կատարել համակարգչային եղանակով, օրինակ՝ թեստային առաջադրանքների կատարումը:

«Ինֆորմացիայի ազատության կենտրոնի» մասին

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ն հիմնադրվել է 2001թ. հուլիսի 1-ին: Կազմակերպության առաքելությունն է նպաստել տեղեկատվության ազատության մասին օրենսդրության կիրառմանը, ՀՀ կառավարման համակարգի թափանցիկությանն ու հրապարակայնությանը եւ այդ համակարգում քաղաքացիական հասարակության մասնակցության ապահովմանը:

ԻԱԿ գործունեության հիմնական ուղղություններն են.

Կոռուպցիայի դեմ պայքար: 2001թ.-ից կենտրոնը տեղեկատվության ազատության ոլորտի զարգացմանն ուղղված ավելի քան 50 ծրագիր է իրականացրել տեղական եւ միջազգային կազմակերպությունների հետ: ԻԱԿ-ը ներգրավված է հակակոռուպցիոն տարբեր միջոցառումներում, այդ թվում՝ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների եւ պաշտոնյաների համար ուսուցումների իրականացում, հանրային կրթության քարոզարշավների կազմակերպում, աջակցություն հակակոռուպցիոն ազգային ռազմավարությունների մշակման եւ իրականացման մոնիտորինգ եւ այլն: Կառույցն անդամակցում է ՄԱԿ-ի հակակոռուպցիոն կոնվեցիայի կոալիցիային, 2019 թվականի հուլիսից Ինֆորմացիայի ազատության կենտրոնը ընդգրկված է ՀՀ Հակակոռուպցիոն քաղաքականության խորհրդի կազմում:

Բաց կառավարման գործընկերություն: ԻԱԿ-ն ակտիվորեն ներգրավված է «Բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնության մեջ գործընթացի ձեւավորման օրից: ՀԿ-ի նախաձեռնությամբ եւ ջանքերով 2013-ին գործարկվել է ԲԿԳ-ի հայաստանյան պաշտոնական կայքէջը՝ www.ogp.am: ԻԱԿ-ն ակտիվորեն ներգրավվել է ԲԳԿ ազգային գործողությունների բոլոր ծրագրերի մշակմանը, իրականացմանը եւ մոնիտորինգի գործընթացներին:

Մշտադիտարկում: ԻԱԿ-ը տարեկան 1000-ից ավելի տեղեկություն ստանալու հարցում է ուղարկում պետական եւ տեղական ինքնակառավարման մարիներին՝ իրականացնելով տեղեկատվության ազատության վիճակի մոնիտորինգներ եւ ապահովելով տարբեր տեղեկությունների հրապարակայնությունը ողջ հանրության համար:

Ուսուցումներ: Կենտրոնը տեղեկատվության ազատության ոլորտում գիտելիք եւ հմտություններ է փոխանցում քաղաքացիական հասարակության տարբեր խմբերի եւ հանրային ծառայողների տեղեկատվության ազատության վերաբերյալ պարբերաբար կազմակերպվող ուսուցումների շնորհիվ:

Հանրային քարոզարշավ: 2001թ.-ից մինչ օրս Կենտրոնն իրականացնում է հանրային քարոզարշավ տեղեկատվության ազատության խնդիրներին հանրությանն իրազեկելու նպատակով: Կենտրոնի ամենամյա «Մե ցուցակ»-ը հրապարակայնացնում է տեղեկություն ստանալու իրավունքի խախտումները: **SU ամենամյա մրցանակաբաշխություն:** Ոսկե բանալի՝ լավագույններին, կողպեք՝ «ամենափակ»-երին: ԻԱԿ-ի SU ամենամյա մրցանակաբաշխությունը բացահայտում է SU օրենքը լավագույնս կիրառած

քաղաքացիներին, ՀԿ-ներին, պետական կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմիններին եւ լրագրողներին, ինչպես նաեւ իրավախախտներին:

Բարեփոխումներ էլեկտրոնային կառավարման ոլորտում: 2011թ.-ին ԻԱԿ-ի նախաձեռնությամբ արդիականացվել են ՀՀ տարածքային կառավարման նախարարության եւ 10 մարզպետարանների պաշտոնական կայքերը: Ինչպես եւ 2009-2010 թթ. ԻԱԿ-ն աջակցել է ՀՀ մարզպետարաններում ներդնելու էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության Մալբերի համակարգը: Կենտրոնը պարբերաբար ուսումնասիրում է պաշտոնական կայքերը վեր հանում առկա խնդիրները եւ առաջարկներով ու ռեկոմենդացիաներով աջակցում կառավարությանը բարեփոխումների գործընթացում:

Օրենսդրական բարեփոխումներ: Ինֆորմացիայի ազատության կենտրոնն ակտիվ դերակատարում է ունեցել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի մշակման եւ ընդունման գործում: Ներկայումս ԻԱԿ-ը նախաձեռնել է ՏՍ օրենսդրության բարեփոխումների երկրորդ սերնդի մշակման եւ ընդունման գործընթացը:

Ռազմավարական դատավարություն: ԻԱԿ-ն իրականացնում է տեղեկատվության ազատության իրավունքի դատական պաշտպանության առաքելությունը: Ինֆորմացիայի ազատության կենտրոնի նախաձեռնությամբ հարուցվել է 70 դատական գործ՝ տեղեկատվություն ստանալու իրավունքի ոտնահարման վերաբերյալ, որոնց 75 տոկոսն ավարտվել է դրական արդյունքով՝ ապահովելով տեղեկություն ստանալու խախտված իրավունքի վերականգնումը: 2020 թվականի հուլիսից ՀՀ փաստաբանների պալատի հետ համատեղ Ինֆորմացիայի ազատության կենտրոնը նախաձեռնել է ռազմավարական դատավարությունների 4-րդ փուլը՝ նպատակ ունենալով ապահովել տեղեկատվության ազատության օրենսդրության պատշաճ կիրառումը հետհեղափոխական ՀՀ-ում եւ իրականացնել տեղեկություն ստանալու խախտված իրավունքի դատական պաշտպանություն:

Ապատեղեկատվության դեմ պայքար: ԻԱԿ-ն աջակցում է ապատեղեկատվության դեմ պայքարին հանրային կարեւոր ոլորտներին առնչվող տեղեկություններ եւ փաստաթղթեր ստանալով եւ հանրայնացնելով, ինչպես նաեւ լրագրողների եւ հասարակական կազմակերպությունների համար թիրախային ուսուցումներ կազմակերպելով: 2019 թ.-ից ի վեր «Տեղեկատվության մատչելիություն. Նոր մարտահրավերներ, նոր լուծումներ» ծրագրի շրջանակում ԻԱԿ-ը Հանրային լրագրության ակումբի հետ համատեղ նպաստում է նոր կառավարությունում տեղեկատվության մատչելիության եւ թափանցիկության ապահովմանը, ինչպես նաեւ օգնում էրիտասարդությանը հզորացնելով գործնական գիտելիքով եւ հմտություններով՝ իրացնելու ակտիվ քաղաքացու վերահսկողության իրենց դերը, ինչպես նաեւ բարելավելով հանրային տեղեկատվության հոսքն ու որակը: 2020 թ.-ի հուլիսից ԻԱԿ-ը նախաձեռնել է նոր ծրագիր՝ Պայքար ապատեղեկատվության վիրուսի դեմ՝ նպատակ ունենալով զարգացնել լրատվամիջոցների մեդիա գրագիտությունը եւ էրիտասարդության փաստերի ստուգման հմտությունները Հայաստանի 5 կրթական հաստատություններում ստեղծելով փաստերի ստուգման լաբորատորիաներ: